



EUROPEAN COMMISSION

ՄԱՍԼՈ ՀԱՐԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրյուսել, 28 օգոստոսի 2012թ.

## Եվրոպական հանձնաժողովը հատկացնում է նոր ֆինանսական աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացման և տնտեսական ինտեգրման նպատակով

Բրյուսել, 28-ը օգոստոսի, 2012թ. Եվրոպական հանձնաժողովն ընդունեց Արևելյան գործընկերության 2012թ.-ի Հայաստանի Գործողությունների տարեկան ծրագիրը, որն ուղղված է արդարադատության ոլորտի բարեփոխումների արագացմանը, միաժամանակ հիմք ապահովելով ԵՄ-ն հետ ընդլայնված երկկողմ հարաբերությունների, քաղաքական ասոցացման ու տնտեսական ինտեգրման համար:

Նոր օժանդակությունը ընգրկում է նոր կրթական հնարավորություններ պետական հաստատությունների աշխատակիցների համար, փորձագիտական խորհրդատվություն և լավագույն փորձի փոխանակում, իրավաբանների, դատավորների և դատախազների նոր դպրոցների ստեղծում: Այն նպատակ ունի ձևավորել անկախ, թափանցիկ և արդյունավետ արդարադատության համակարգ, որը պատշաճ կձառայի հայ ժողովրդին՝ հիմնվելով արդարադատության ոլորտի ԵՄ օժանդակությամբ իրականացվող ծրագրերի արդյունքների վրա:

Միաժամանակ, ծրագրով նախատեսվում է օժանդակել ՀՀ շահագրգիռ հաստատություններին, ԵՄ-Հայաստանի բանակացային փուլում գնտվող Ասոցացման համաձայնագրի (ներառյալ՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտին), Մուտքի արտոնագրերի դյուրինացման և Ռեադմիսիայի համաձայնագրերի նախապատրաստման և հետագա իրականացման առնչությամբ:

### Ընդհանուր տեղեկություններ

2012 թ.-ի Գործողությունների տարեկան ծրագրի շրջանակներում Հայաստանին տրամադրվում է 60մլն. եվրո երկկողմ ֆինանսավորում: Օժանդակությունը տրամադրվում է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո (ԵՀԳԳ):

Ծրագիրը բաղկացած է երեք մասից.

- **Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին – փուլ II**՝ խթանում է ավելի անկախ, թափանցիկ, հաշվետու, մատչելի և արդյունավետ արդարադատության ոլորտի ձևավորմանը արդարադատության ոլորտի բարեփոխումների պետական ռազմավարությանը համահունչ: Այն բաղկացած է և հիմնվում է արդարադատության ոլորտում ԵՄ օժանդակությամբ իրականացվող ծրագրերի արդյունքների վրա:

Contacts :

[Anca Paduraru](#) (+32 2 296 64 30)

- **Աջակցություն ԵՄ-Հայաստան Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտուն (ԽՀԱԱԳ)**՝ ապահովում է, որ Հայաստանը ձեռնարկի անհրաժեշտ միջոցները ԽՀԱԱԳ առևտրային նոր հնարավորություններից առավելապես օգտվելու և քաղաքացիներին այդ օգուտները հասանելի դրաձնելու համար:
- **Աջակցություն ԵՄ - Հայաստան համաձայնագրերին**՝ բարձրացնում է Ստացման համաձայնագրի, Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու, Մուտքի արտոնագրերի դյուրինացման և Ռեադմիսիայի համաձայնագրերի նախապատրաստման և դրանց հետագա իրականացման շահագրգիռ մի շարք գերատեսչությունների տեխնիկական և համակարգող հմտությունները:

Ստացման համաձայնագիրը նոր փաստաթուղթ է, որն ապահովում է ավելի սերտ և խորը երկկողմ հարաբերություններ Եվրոպական միության և Հայաստանի միջև: Ներկայում վերոնշյալ փաստաթուղթը երրորդ երկրի հետ գոյություն ունեցող Եվրոպական միության ամենասերտ պայմանագրային կապն է: Այն միաժամանակ խթանում է առևտրի ազատականացմանը (Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու միջոցով) և օգնում է երկխոսություն ծավալել մուտքի արտոնագրերից ազատ ռեժիմի ստեղծման շուրջ (Մուտքի արտոնագրերի ազատականացման գործողությունների ծրագիր – ՄԱԱԳԾ):

### **Լրացուցիչ տեղեկությունների համար՝**

Ներբեռնել 2012 թ.-ի Հայաստանի Գործողությունների տարեկան ծրագիրը՝

[http://ec.europa.eu/europeaid/work/ap/aap/2012\\_en.htm](http://ec.europa.eu/europeaid/work/ap/aap/2012_en.htm)

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն՝

[http://eeas.europa.eu/delegations/armenia/index\\_en.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm)

ԵՄ-Հայաստան արտաքին հարաբերություններ՝

[http://eeas.europa.eu/armenia/index\\_en.htm](http://eeas.europa.eu/armenia/index_en.htm)

Արևելյան գործընկերություն՝

<http://ec.europa.eu/europeaid/easternpartnership>

Հանձնակատար Շտեֆան Ֆյուլերի կայք-էջ՝

[http://ec.europa.eu/commission\\_2010-2014/fule/index\\_en.htm](http://ec.europa.eu/commission_2010-2014/fule/index_en.htm)